

ԿԼԱՍԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՋԻՈՎԱՆՆԻ ԲՈԿՍՋԻՈ

ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

Պ Ե Տ Ն Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ

1937

85 | 1370
P 82 | Pnyuyn S.
Bunndyqyrye. 1937.
60 K.

ՋՈՎԱՆՆԻ ԲՈԿԱԶԻՈ

85


A-82

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1951 Ք.

ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

1370

Ֆրանս. թարգմանեց
ՎԱՀԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



A 21799

ՊԵՏՂՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937

Խմբագիր՝ Վ. Քերզազյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գառնաշյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

ՋՈՎԱՆՆԻ ԲՈԿԱԶԻՈ

(1313-1375)

Իտալական գրող Բոկաչիոյի կյանքը և գրական գործունեությունը վերաբերվում է այն ժամանակաշրջանին, վորը Արևմտյան Յեվրոպայի գրականության պատմության մեջ հայտնի չէ վերածնության եպոխտ անունով: Բոկաչիոն, Շեքսպիրի և Սերվանտեսի հետ միասին հանդիսանում է մոչ միայն այդ եպոխտի, այլ և առհասարակ համաշխարհային գրականության խոշորագույն կլասիկներինց մեկը:

Բոկաչիոն ծնվել է Ֆլորենցիայի հայտնի վաճառականի ընտանիքում: Հայրը ամեն կերպ աշխատում էր վորդուն պարաստել վաճառականության համար, բայց յերբ համոզվեց վոր վորդին, գեղարվեստական գրականությամբ տարվելու պատճառով, վաճառական դառնալու վոչ մի հետաքրքրություն հանդես չի բերում, վորոշեց ուսման բնույթը փոխել: Այդ նպատակով 1324 թվ. Բոկաչիոյին տանում է Նեապոլ և ստիպում է նրան զբաղվել իրավաբանությամբ: Բոկաչիոն, վորը շատ վաղ հասակից անսահման հետաքրքրություն էր հանդես բերում դեպի պոեզիան և հաշվապահական մատյանները, հաշիվները գրանցելու փոխարեն, լցնում էր իր բանաստեղծություններով, այս անգամ նույնպես չի արդարացնում հոր հույսերը: Մոտ 16 տարի մնալով Նեապոլում, իրավաբանական գիտությունները ուսումնասիրելու փոխարեն, նա ուսումնասիրում է մի շարք լեզուներ (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն և այլն) և հիմնավորապես ծանոթանում է անտիկ աշխարհի կուլտուրայի, արվեստի և գրականության հետ: Նա մեծ հետաքրքրություն է հանդես բերում հատկապես դեպի ժողովրդական բանահյուսությունը (Ֆոլկլոր), ուսումնասիրում և գրի չե առնում բազմաթիվ ազգերի ժողովրդական լեզենդներ, պատմվածքներ, ասացվածքներ, և ապա լայն չափով ոգտագործում կամ վերամշակում է այդ բոլորն իր ստեղծագործությունները գրելիս: Այս հիմքի վրա չէ առաջանում նրա աշխարհահռչակ «Դեկամերոն»-ը:

1341 թվ. Բոկաչիոն հոր պահանջով վերադառնում է Ֆլորենցիա: Բոկաչիոյի մայրն այդ ժամանակ մահացել էր, իսկ հայրը, Ֆինանսական կրիզիսի հետևանքով՝ սնանկացել: Բոկաչիոն պետք է ոգներ հորը: Նա ընտանեկան մանր գործերով զբաղվելուց բացի ակտիվ կերպով մասնակցում է Ֆլորենցիայի հասարակական—քաղաքական կյանքին: Նա չի մոռանում նաև իր սիրած առարկան—գրականությունը: Թարգմանել է տալիս Հոմերոսին (լատիներեն), ուսումնասիրում է Դանտեյի կյանքը և գրական գործունեությունը, հրապարակական դասախոսություններ և կարդում Դանտեյի մասին: Գրում է Դանտեյի կենսագրությունը: Բոկաչիոն Դանտեյի առաջին կենսագիրը և մեկնաբանողն է: 1345 թվ. նա նորից գնում է Նեապոլ, բայց այս անգամ չերկար չի մնում, վերադառնալով 1349 թվ. մահանում է հայրը և նա ստիպված է լինում վերադառնալ Ֆլորենցիա: Բոկաչիոն կյանքի վերջին տարիները անց է կացնում ծայրահեղ կարիքի և թշվառություն մեջ: Մահանում է ծանր և յերկարատև հիվանդությունից հետո և թաղվում է Չերտալդոյում:

Իտալական վերածնությունից հետո իտալական գրականությունը բացի Բոկաչիոյից, տվել է նաև յերկու խոշոր գրողներ՝ Դանտե և Պետրարկա: Դանտեն հանդես է յեկել Բոկաչիոյից առաջ, իսկ Պետրարկան յեղել է նրա ժամանակակից գրող: Նա այս գրողներից շատ բան սովորեց, բայց նա նրանցից տարբերվում է նրանով, Վոր Բոկաչիոյի մոտ իտալական վերածնությունից հետո իտալական ստացավ ավելի ցայտուն և ավելի ամբողջական արտահայտություն: Դանտեն, ինչպես գրել է Նեդելսը նրա մասին, հանդիսանում էր Ֆեոդալական միջնադարի վերջին և նոր ժամանակավառ առաջին պոետը: Նրա «*Ասվածային կատակերգությունը*» հանդիսանում էր միջին դարերի գրական-կուլտուրական արժեքների գրանդիոզ ամփոփումը մի կողմից, և նոր ժամանակավառ, կապիտալիստական եպոխտի սզատարարությունը՝ մյուս կողմից: Յեթե Դանտեն դեռևս շատ թելիքով կապված էր ֆեոդալական միջնադարի հետ, ապա Պետրարկան այս տեսակետից մի քայլ առաջ էր Դանտեյի համեմատությամբ: Սակայն Պետրարկան նույնպես իր բոլոր կապերը չկտրեց ֆեոդալական միջնադարից:

Բոկաչիոն առաջին գրողն էր, Վոր ուժեղ քննադատությամբ յենթարկեց այն ամենը, ինչ Վոր կապված էր ֆեոդալական աշխարհի և նրա կուլտուրայի հետ: Նա առաջին գրողն էր նաև

այն տեսակետից, վոր նկատեց նոր ձևավորվող կապիտալիստական հասարակության հակասությունները, բայց չկորոզացավ և չեր կարող այդ եպոխայում չիլք գտնել այդ հակասություններին:

Բողաչիոյի թողած գրական ժառանգության մեջ համաշխարհային հռչակ են ստացել հատկապես նրա յերկու գործերը— «Ֆիամեսա» և «Դեկամերոն»:

«Ֆիամեսան» Արևմտյան Յեվրոպայի գրականության պատմության մեջ առաջին ռեալիստական—հոգեբանական վեպն է: Այս գործի մեջ գրականության հետաքրքրության առանցքը վերջնականապես դառնում է ռեալ մարդկային կյանքը, ինքը մարդը և նրան շրջապատող պատմական իրականությունը: Բողաչիոյին չեյին հետաքրքրում այն յերևույթները, վորոնք կամ չունեն մարդկային կյանքի հետ:

Սակայն Բողաչիոյի գլուխ գործոցը նրա «Դեկամերոնն» է: Իր գործի ներածության մեջ Բողաչիոն պատմում է, վոր Ֆլորենտացի 7 յերխտասարդ աղջիկ և յերեք յերխտասարդ տղամարդ Ֆլորենցիայի հայտնի ժանտախտի ժամանակ (1348) վորոշում են հեռանալ քաղաքից մի ավելի ապահով շրջան: Այնտեղ նրանք մնում են տասն ուր (դեկամերոն) և վորպեսզի ժամանակը տխուր և միտրինակ չանցնի, նրանցից ամեն մեկը որը մի պատմվածք է պատմում: Այսպիսով, ամեն մեկը պատմում է տասը պատմվածք և բոլոր պատմվածքների գումարը դառնում է հարյուր: «Դեկամերոնը» բաժանված է տասը որովա (մասի), ամեն մի մասում ղետեղված է տասը պատմվածք: Ամեն մի տասը պատմվածք ներքին բովանդակությամբ կազմում է մի ամբողջություն, բայց միաժամանակ ամեն մի պատմվածք հանդիսանում է կատարելապես ինքնուրույն գործ: Նույն սկզբունքով է կառուցված նաև ամբողջ «Դեկամերոնը»: Բոլոր հարյուր նովելները հանդես են գալիս վորպես մի կուռ ամբողջություն, բայց միաժամանակ ամեն մի նովելը կազմում է ընդհանուր շղթայի մի ինքնուրույն ողակը:

«Դեկամերոն»-ի մեջ Բողաչիոն շոշափում է բազմաթիվ թեմաներ ու պրոբլեմներ: Նրա ամենահիմնական թեմաներից մեկը կղերա-ֆեոդալական աշխարհայացքի, կաթոլիկական յեկեղեցու և հոգևորականության քննադատությունն է: Այս տեսակետից Բողաչիոյի ամենալավագույն գործերից մեկը վեցերորդ որովա տասներորդ պատմվածքն է— «Մասունքներ»:

Այս պատմվածքը մի ջախջախիչ քննադատություն է ուղղված հոգևորականության դեմ: Բողաչիոյի հանդես բերած վանականը՝ յեղբայր Չիպլլան մի կատարյալ շարլատան է, վոր որը ցերեկով խարում է դյուղացիներին, ոգտագործելով նրանց նախապաշարմունքները և դյուրահավատությունը: Բողաչիոն այստեղ մերկացնում է հոգևորականության պորտաբույծ կյանքը, թե ինչպես նրանք ապրում են ժողովրդի հաշվին: Չիպլլայի Չերտալդո գնալու նպատակը պարզ է նշված, նատարին մեկ անգամ գնում էր այնտեղ հավաքելու այն գանձանակը, վորը նրան տալիս էին «տխմար ժարդիկ», ինչպես ասված է պատմվածքի մեջ: Յեվ ահա այդ գանձանակը հավաքելու համար Չիպլլան վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում: Բայց միան Չիպլլան չի աչքսկես: Այդպես էր վողջ հոգեվորականությունը և Բողաչիոն ի դեմս Չիպլլայի մերկացնում է ի ժամանակվա հոգևորականությանը՝ ցույց տալով թե ինչպես կրնա այդ պորտաբույծ դասի ձեռքին մի հզոր գեներ էր ժողովրդի անհնավերջին ունեցվածքը կողոպտելու գործում: Այդ բական պատկերը ապրով Բողաչիոն սակայն դեմ չէր վոչ կրոնին և վոչ էլ չեկեղեց ըն: Նա հոգևորականությանը քրննագատում էր նրանց ուղղելու նպատակով, նա պայքարում էր հոգևորականության «թերություններ, ի» դեմ և աշխատում էր վերացնել այդ թերությունները: Բայց դուրս չեկավ այնպես, վոր յեթե չեկեղեցին և հոգևորականությունը վերացնելին Բողաչիոյի նշած «թերությունները», ապա նրանք պետք է դադարեցին գոյություն ունենալուց, վորովհետև դրանք այնպիսի «թերություններ» էին, վորոնք կազմում էին չեկեղեցու և հոգևորականության էությունը, առանց վորի նրանք չէին կարող գոյություն ունենալ:

Այսպիսով Բողաչիոյի այս նովելլան չնայած գրված է հոգևորականությանը ուղղելու նպատակով, բայց նա որեկտիվորեն ուղղված է վողջ հոգևորականության դեմ և նովելլայի մեջ հանդես բերած փաստերից ինքնին բխում է չեկեղեցու և հոգևորականության բացասելու անհրաժեշտությունը—մի բան, վոր չնկատեց և չէր կարող նկատել ինքը՝ Բողաչիոն:

Չնայած Բողաչիոն իր քաղաքական հայացքներով կապված էր բուրժուազիայի հետ և բաժանում էր այդ դասակարգի սոցիալական նախապաշարումները, բայց նա առաջադրեց սրորդիններ, վորոնք ավելի լայն և ավելի մաքուր հորիզոններ ու-

նեյին քան թե բուրժուազիայի դասակարգային պրակտիկան։
Այդ պատճառով եւ Բոկաչիոն չի կորցրել իր հետաքրքրու-
թյունը և խոշոր արժեքը մեզ համար։ Բոկաչիոյի թողած պրա-
կան ժառանգությունը կարող եր գնահատվել և ամենալայն
մասսաների իրական սեփականությունը դառնալ միայն և մի-
այն Լենինի և Ստալինի ղեկավարությամբ կառուցված խոր-
հրդային կարգերում։

2. Մամիւնյան



Դուք գուցե լսել եք, վոր Չերտալդոն¹ Ելսայի հովտում մի փոքր քաղաք է և գտնվում է մեր շրջանում: Թեև փոքր է, բայց չերբեմն լեզել է ազնվական ու բարեկեցիկ մարդկանց բնակավայրը: Յեվ վորովհետև այդ տեղ լավ ոգուտ կար՝ դրա համար Սան Անտոնիոյի միաբանության անդամներից մեկը, չեղբայր Չիպոլլա անունով, վաղուց սովորություն ուներ տարին մեկ անգամ գնալ այնտեղ և հավաքել այն գանձանակը, վորը տալիս էլին տխմար մարդիկ: Նրան լավ էլին ընդունում վոչ այնքան բարեպաշտությունից մղված, ինչքան նրա անվան² համար, վորովհետև այդ վայրը հայտնի չե իր լավորակ սոխով վողջ Տոսկանիայում: Այս չեղբայր Չիպոլլան փոքր մարմնով, շիկահեր, գվարթադեմ և շատ սատանա մարդ էր: Նա թեև վոչ մի կրթություն չուներ, բայց այնքան գեղեցիկ ու ճարտար խոսող էր, վոր նրան չճանաչող մարդիկ վոչ միայն լավ հռետորի տեղ կընդունեյին նրան, այլ նաև կկարծեյին թե կիկերոնն³ է կամ Կվինտիլիանը⁴: Նա քաղաքի բոլոր բնակիչների

¹ Չերտալդո ավանը գտնվում է Միջին Իտալիայի Տոսկանիա նահանգում, վորի մայրաքաղաքը Ֆլորենցիան է: Այս ավանումն է ծնվել ու մեռել «Իեկամերոն»-ի հեղինակը՝ Ջովաննի Բոկաչիոն:

² Չիպոլլա իտալերեն նշանակում է սոխ:

³ Կիկերոնը հին Հռոմի ամենաճարտասան հռետորն է: Ապրել է մեղանից 2000 տարի առաջ: Նրանից մնացած ճառերը «Ֆիլիպիկներ»-ը, «Կատիլինյանք» և այլն համարվում են լատին պերճախոսության ամենաբարձր նմուշներ:

⁴ Կվինտիլիանը ապրել է Կիկերոնից մեկ դար հետո, նույնպես լատին հռետոր է: Իր «Արվեստ հռետորական»-ի մեջ

կամ կնքնահայրն եր, կամ բարեկամը, և կամ թե գաղտնապահը:

Մի անգամ ըստ իր սովորութեան, ոգոստոս ամսին նա լեկել եր ա.դ. գյուղը. կիրակի որ, լերբ շրջակա գյուղերից բողմաթիվ տղամարդիկ և կանայք հավաքվել էին ծխական լեկեղեցին պատարազը լսելու՝ լեղբայր Չիպուլյան հենց վոր նկատեց թե ժամը հարմար է, առաջացավ դեպի ժողովուրդն ու ասաց. «Պարոններ և տիկիններ, ինչպես ձեզ լայտնի լե, դուք սովորութեանն ունեք ամեն տարի սուրբ Անտոնի աղքատներին ձեր հացահատիկից ու խոտից բաժին հանել, վոմանք շատ, վոմանք քիչ, նայած կարողութեան և բարեպաշտութեան, վորպեսզի լերանելի սուրբ Անտոնը պահպանի ձեր լեզները, եշերը, խոզերը և գառները: Բացի դրանից, դուք սովորութեանն ունեք վճարելու, մանավանդ ձեզանից նրանք, ովքեր անդամագրված են մեր լեղբայրութեան, այն փոքրիկ տուրքը վորը վճարվում է տարին մեկ անգամ: Այդ նվիրատվութեանները հավաքելու համար է, վոր ինձ ուղարկել է իմ մեծավորը, այսինքն մեր արբանայրը: Ուստի, աստուծո որհնութեամբ, լերբ իններորդ ժամադանգը լսեք՝ կգաք այստեղ, լեկեղեցուց դուրս, վորտեղ ըստ սովորութեան քարոզ կկարդամ և դուք ել կհամբուրեք խաչը: Դեռ ավելին, քանի վոր լես ձեզ ճանաչում եմ վորպես սուրբ Անտոնին խիստ հարգողներ, ա՛յ վորպես հատուկ շնորհ՝ ցույց կտամ ձեզ մի չափազանց սուրբ ու գեղեցիկ մասունք, վոր ինքս ա՛յ ձամբ բերել եմ անդրժովյա սուրբ լերկրից¹: Դա Գաբրիել հրեշտակի փետուրներից մեկն է, վոր մնացել է սուրբ կույս

պայքարել է նրանց դեմ, ովքեր ուզում էին ճարտասանութեանը վերածել իրավախորհրդատույի և փաստաւանի արհեստի:

¹ Քրիստոնյաները նաև սուրբ լերկիր են անվանում Պաղեստինը, վորովհետև այնտեղ ըստ առասպելի, ապրել, քարոզել և խաչվել է Քրիստոսը:

Մարիամի¹ սենյակում, յերբ յեկել էր նրա մոտ Նազարեթ քաղաքը ավետման համար»:

Այս խոսքերն ասելուց հետո նա լռեց և վերադարձավ իր պատարագը մատուցելու:

Յերբ յեղբայր Չիպուլան ճառում էր այսպես, յեկեղեցում, բազմաթիվ ներկաների մեջ կային յերկու խիստ խորամանկ յերիտասարդներ, մեկի անունը Ջովաննի դել Բրագոնիերա, մյուսինը՝ Բոջո Պիցցինի: Նրանք իրար մեջ յեղբայր Չիպուլայի մասունքների վրա բավական ծիծաղելուց հետո՝ թեև նրա բարեկամներից ու ընկերութունից ելին, այնուամենայնիվ մտածեցին մի խաղ խաղալ այդ փետրի գլխին: Տեղեկանալով, վոր յեղբայր Չիպուլան այդ առավոտը պետք է նախաճաշեր դրջակում իր բարեկամներից մեկի հետ՝ հենց վոր իմացան թե նա սեղան է նստել, իջան փողոց ու գնացին այն պանդոկը, վորտեղ իջևանել էր յեղբայր Չիպուլան, բայց նախորոք պայմանավորվեցին, վոր Բոջո Պիցցինին խոսակցության պիտի բռնվեր Չիպուլայի ծառայի հետ, իսկ Ջովաննին նրա իրերի մեջ պիտի փնտռեր փետուրն ու վերցնե, վորպեսզի տեսներ, թե յեղբայր Չիպուլան ինչ էր ասելու ժողովրդին այդ մասին:

Յեղբայր Չիպուլան մի ծառա ուներ, վորին վոմանք անվանում ելին Գուչո Բալենա (կես ձուկ), վոմանք Գուչո Իմբրատա (կեղտոտութուն) և վոմանք էլ Գուչո Պորկո (խոզ): Այդ ծառան այնքան տգեղ էր, վոր Լիպո Տոպոն² նրա նմանը բոլորովին չի նկարել: Յեղբայր Չիպուլան հաճախ էր շրջանում ծաղրում նրան և ասում, թիմ ծառան ինն այնպիսի հատկութուններ ունի, վոր

¹ Ըստ քրիստոնեյական հավատի Գաբրիել հրեշտակապետը այցելեց կույս Մարիամին Նազարեթ քաղաքում և ավետեց նրան, վոր ունենալու յե մի վորդի՝ Հիսուսը:

² Նկարչի անունը:

յեթե դրանցից մեկնու մեկը ունենալին Մողոմոնը¹, Արիստոտելը² կամ Սենեկան³ բավական եր փշացնելու նրանց ամբողջ առաքինությունը, խելքն ու սրբությունը: Ուրեմն պատկերացրեք թե ինչ մարդ ե նա, քանի վոր ինն այսպիսի հատկություններ ունենալով՝ վոչ առաքինություն ունի, վոչ խելք և վոչ ել սրբություն»: Յնչ վորովհետև հարցնում ելին, թե վորոնք են այդ ինն հատկությունները՝ Չիպոլլան ել վոտանավորով այսպես եր ասում.

«Ծուշլ ե, կեղտոտ ու ստախոս,
Անփուլթ, անհնազանդ ու շարախոս,
Անող, անմիտ ու անբարո»:

Բացի սրանցից, նա այլ թերություններ ել ունի, վոր ավելի լավ ե շասել: Իսկ ամենածիծաղելին այն ե,

¹ Հրեաստանի թագավոր, ապրել ե մեզնից 3000 տարի առաջ. վորդին ե Դավիթ թագավորի (կամ մարգարեյի): Նրա պալատի ճոխությունը ի հաշիվ աշխատավորների շահագործման՝ հաճախ ապստամբություններ ե առաջացրել: Արևելյան ժողովուրդները տվել են նրան իմաստուն մակդիրը:

² Հին Հունաստանի մեծագույն մտածողներից ու գիտնականներից մեկը: Յեղել ե նշանավոր փիլիսոփա Պլատոնի աշակերտը և հիմնել ե Աթենքում մի փիլիսոփայական դպրոց: Միջին դարերում ունեցել ե բացառիկ հեղինակություն: Նրա գլխավոր գործերից են «Եթիկա», «Անալիտիկա», «Մետաֆիզիկա», «Պոետիկա», «Պոլիտիկա», «Մետեորոլոգիա» և այլն: Ապրել ե մեզնից մոտ 2400 տարի առաջ:

³ Հռոմեացի ստոիկ փիլիսոփա: Ծնվել ե Սպանիայում մեզանից 1935 տարի առաջ: Ապրել ու գործել ե Հռոմում. յեղել ե Ներոն կայսրի դաստիարակը: Մեղադրվեց Ներոնին սպանելու մտադրություն ունենալու համար, դատապարտվեց մահվան և ինքնասպան լեղավ 68 տ. հասակում: Բացի դիալոգներից, տրակտատներից և նամակներից, վորոնց վոճը սեղմ ե և ուժեղ, գրել ե մի քանի վողբերգություններ, բայց իր հռչակը ձեռք ե բերել առաջինների համար:

վոր ամենուրեք ուզում է ամուսնանալ և բնակարան
վարձել: Յեւ վորովհետև յերկար, սև ու փայլուն մորուս
ունի, վոր նրա կարծիքով խիստ գեղեցիկ ու դուրեկան
է, ապա նա յերևակայում է, վոր իրեն տեսնող բոլոր
կանայք սիրահարվում են իրեն և յեթե թողնեն կվազի
նրանց յետևից գոտին կորցնելու աստիճան: Ճիշտ է,
վոր ինձ ոգնում է, դրա համար ել չկա վորևէ մարդ,
վոր ինչքան ել թագուն բան ասի ինձ՝ նա չուզենա
դրա բաժինն ստանալ: Իսկ յեթե պատահում է, վոր մի
բան են պահանջում ինձնից, նա այնքան է վախենում,
վոր չես չկարողանամ պատասխանել, ուստի ինքն է պա-
տասխանում՝ այո կամ վոչ, նայած թե վորն է հարմար
նկատում»:

Յեղբայր Չիպուլլան թողնելով նրան պանդոկում՝
պատվիրել էր լավ հսկել իր իրերին և թուլ չտալ, վոր
վորևէ մեկը ձեռք տա դրանց, մանավանդ պարկերին,
վորովհետև դրանց մեջ էին սուրբ բաները:

Բայց Գոչո Իմբրատան շատ ավելի ցանկանում էր
մնալ խոհանոցում, քան թե սոխակը կանաչ ճուղի վրա, մա-
նավանդ յերբ իմանում էր, վոր վորևէ աղախին կար այդ-
տեղ: Այդ որը պանդոկի խոհանոցում տեսել էր մի ճարպոտ
ու չաղ, փոքրիկ, տձև ու տգեղ, աղբի կողովների նման-
վող գուլգ ստինքներով, քրտնաթաթախ, ճենճոտ ու ծխա-
բուլբուր աղջիկ, ուստի թողեց յեղբայր Չիպուլլայի սենյակն
ու իրերն անտեր և լեշի վրա հարձակվող անգղի նման
գնաց խոհանոց:

Թեև ոգոստոս ամիսն էր, բայց և այնպես նա նըս-
տեց կրակի մոտ և սկսեց խոսակցության բռնվել այդ տգեղ
աղջկա հետ, վորի անունը Նուտա յեր, և ասաց, վոր ինքն
ազնվական է, փոխարինաբար¹, հազարավոր վոսկիներ
ուներ և կարող էր ուրիշ շատ հրաշալի բաներ ել ասել:

¹ Հայտնի չէ, վոր փոխարինաբար կամ լիազորությամբ կա-
րելի յե կատարել վորևէ մատչելի աշխատանք, բայց չի կարելի

Յեւ ռշադրութեան շղարձելով գլխին դրած կրն-
 դուղին, վորի վրայի ճարպի հաստ շերտը բավական եր
 Ալտոպաշոյի կաթսայի ճաշը պատրաստելու համար ել, և
 իր պատառոտած, կարկատած բաճկոնին, վորի ոճիքի
 շուրջն ու թևատակերը քրտինքով ծծված ելին և կազ-
 մում ելին այնպիսի նաշխեր, վոր վոչ մի թրքական կամ
 հնդկական գորգի վրա չի կարելի գտնել: Գուշոն չնա-
 յած բոլորովին ծոված կոշիկներին ու քրքրված գուլպա-
 ներին՝ այնպես եր խոսում, կարծես իշխան կաստիլիոնը
 լիներ, ասելով, թե ուզում ե գեղեցիկ շորեր տալ նրան,
 բարելավել նրա դրութեանը, ազատել նրան ուրիշներին
 ծառայելու այդ ստոր վիճակից, և առանց մեծ հարստու-
 թեան ունենալու՝ կարող ե լավագուցն դրութեան հաս-
 նելու հույս տալ, և ուրիշ շատ այդպիսի բաներ: Ու թեև
 այս բոլորը շատ սիրալիր շեշտով ասաց, բայց դրանք
 վերածվեցին քամու, ինչպես նրա գեղեցիկ ձեռնարկնե-
 րի մեծ մասը և հանդան վոչնչի:

Այսպիսով լերկու լերիտասարդները Գուշո Պորկոլին
 գտան Նուտայով զբաղված և շափազանց ուրախանալով
 այս պատեհութեանից, վորով իրենց ջանքի կեսը վերա-
 նում եր և ուրիշ արգելքի չհանդիպելով՝ մտան լեղբայր
 Չիպոլլայի սենյակը: Սենյակը բաց եր և առաջին բանը,
 վոր նրանց աչքին կալավ՝ փետուրը պարունակող պարկն
 եր: Պարկը բաց արին և բազմաթիվ սնդուսներով փա-
 թաթված մի փոքրիկ արկղիկ գտան, վորտեղ մեկ հատ
 թութակի պոչի փետուր կար: Նրանք իսկուցն լենթադրե-
 ցին, թե դա այն փետուրն եր, վոր վանականը խոստա-
 ցել եր Չերտալդոյի բնակիչներին ցուց տալ: Յեւ իսկա-
 պես, այդ տարում նա հեշտութեամբ կարող եր խաբել

փոխարինարար ուրիշի հանձնել վորևե սոցիալական դրութեան:
 Հեղինակն այստեղ հեզնում ե Բուշոյին:

նրանց, վորովհետև Յեզիպտոսի պե լճանքի առարկաները¹
 դեռ շատ քիչ ելին Տոսկանիա թափանցել, ինչպես դրա-
 նից հետո չեն փոխադրվել ի մեծ վնաս Իտալիայի: Յեվ
 չեթե այդ առարկաներն արդեն ճանաչվում ելին վորոշ
 չերկրներում, ապա այդ գավառի բնակիչները վոչինչ
 չգիտեցին դրանց մասին և վոչ միայն թուլթակ չեցին տե-
 սել, այլև չեցին կարող հիշել, վոր չերբևե լսել են այդ
 մասին: Այսպիսով չերիտասարդները խիստ ուրախացան
 փետուրը գտնելու համար, վերցրին այն և արկղիկը դա-
 տարկ չթողնելու համար՝ սենյակի անկյունում ածուխ
 տեսնելով ածեցին արկղիկի մեջ, փակեցին այն և ամեն
 բան դրին այնպես, ինչպես գտել ելին սենյակը մտնելիս:
 Ապա առանց նկատվելու, վերցրին փետուրն ու դուրս
 գնացին՝ սպասելու թե ի՞նչ պիտի ասեր չեղբայր Չիպոլ-
 լան փետուրի տեղ ածուխ գտնելով:

Յեկեղեցում գտնվող միամիտ մարդիկ ու կանայք լը-
 սելով, վոր իններորդ ժամու զանգից հետո պետք է Գաբ-
 ըիել հրեշտակի փետուրը տեսնեն՝ պատարագից անմի-
 ջապես հետո տուն վերադարձան և այդ լուրն իրար հա-
 ղորդեցին. հարևանը հարևանին, խնամին խնամուն: Ապա
 շտապով ճաշելուց հետո մարդկանց ու կանանց մի այն-
 պիսի բազմութուն վազեց դղյակը, վոր հազիվ կարողա-
 ցան տեղ գտնել և մեծ համբերությամբ սպասեցին փե-
 տուրը տեսնելուն:

Յեղբայր Չիպոլլան մի լավ ճաշելուց ու մի քիչ
 քնելուց հետո, իններորդ ժամու զանգից սեկ ըոպե անց
 վեր կացավ ու տեսնելով փետուրը դիտելու համար հավաք-

¹ Յեզիպտոսի պերճանքներ ասելով հեղինակն ակնարկում
 է արևադարձային թռչունների գույնզգույն փետուրները, վոր այդ
 ժամանակներից սկսած մտան Յեվրոպա, վորպես կանանց ու
 տղամարդկանց գլխանոցների զարդ: Յեզիպտոսն այդ ժամանակ
 Աֆրիկայի ծանոթ մասի ամենահայտնի յերկիրն էր և համար-
 ժեք էր Աֆրիկա բառին:

ված այդ բազմութիւնը՝ մարդ ուղարկեց Գուշո Իմբրատային ասելու վոր բերեր զանգակիկներն ու պարկը: Գուշոն մեծ ցավով բաժանվելով խոհանոցից ու Նուտայի շրջագգեստից՝ պահանջած իրերն առնելով գնաց լեկեղեցին: Յերբ շնչասպառ այնտեղ հասավ (վորովհետեւ խմած ահագին քանակութեամբ ջրից փորն ուռել էր) լեղբայր Չիպուլլայի կարգադրութեամբ գնաց դեպի լեկեղեցու դուռը և սկսեց ամբողջ ուժով զանգերը հնչեցնել:

Յերբ ամբողջ ժողովուրդը հավաքվեց, լեղբայր Չիպուլլան առանց նկատելու, վոր իր իրերին ձեռք են տվել՝ սկսեց պատարագը և ի հիմնավորում իր պնդումներին՝ շատ լերկար խոսեց: Իսկ յերբ Գաբրիել հրեշտակի փետուրը ցուց տալու պահը լեկավ, մեծ հանդիսավորութեամբ խոստովանանքը կատարեց, լերկու ջան վառել տվեց, լերկուղածութեամբ արձակեց արկղիկի սնդուսները, հանեց վեղարը, դուրս բերեց արկղիկը ու բաց արեց՝ մի քանի խոսք ասելու ի փառաբանութիւն Գաբրիել հրեշտակի և նրա մասունքի: Տեսնելով արկղիկն ածուխով լցված՝ նա վոչ մի կասկած չտարավ Գուշո Բալենայի վրա, վորովհետեւ գիտեր, վոր նա անընդունակ է այդպիսի խաղ խաղալու, և վոչ ել անիծեց նրան, վոր լավ չէր պահպանել և այդպիսով ուրիշներին հնարավորութիւն էր տվել այդ բանն անելու: Նա խիստ կամացուկ ինքն իրեն հայհոյեց, վոր մասունքների պաշտպանութիւնը նրան էր վստահել, քանի վոր գիտեր նրա անփութութիւնը, անհնազանդութիւնը, ծուլութիւնն ու հիշողութիւնից զուրկ լինելը: Բայց և այնպես առանց դեմքն այլալեւում աչքերն ու ձեռքերը լերկինք բարձրացնելով, ասաց ամենքին լսելի ձայնով. «Ո՛վ աստված, թող քո զորութիւնը հավիտյան փառաբանած լինի»: Ապա փակելով արկղիկը և դառնալով դեպի ժողովուրդն՝ ասաց.

«Պարոնայք և տիկնայք, դուք պետք է իմանաք, վոր

լերք լես բուրոսովին լերիտասարդ ելի, իմ մեծավորն ինձ
 ուղարկեց այն լերկրները, վորտեղ արևն ե ծագում և
 հրամայեց ինչ գնով ել լինի փնտռել ու գտնել Պորչել-
 լանայի (խոճկորհների) մենաշնորհները, վորոնք կնքելը
 թեև դժվար չե, բայց ուրիշներին ավելի ոգտակար ե,
 քան մեզ¹: Դրա համար ել ճանապարհ ընկնելով՝ մեկնե-
 ցի Վենետիկից հասա հուլների քաղաքը. այդտեղից ել
 Գարբի թագավորութան և Բալկատայի վրայով հասա
 Պարիոն, ապա խիստ ծարավելով՝ մի քանի ժամանակ
 հետո հասա Սարդինիա²: Բայց ինչու լեմ պատմում այս
 բուրոս լերկրների մասին, վորտեղ փնտռել եմ: Սուրբ
 Գեվորգի նեղուցն անցնելով՝ հասա Տրուֆիա և Բուֆիա
 (Պաբեստան և Փչոցստան), մի խիստ բազմամարդ աշ-
 խարհ, այդտեղից ել հասա Ստաստան, վորտեղ հանդի-
 պեցի մեր լեղբայրներից շատերին, վորոնք բուրոն ել
 փախչում եին այդ լերկրի դժվարություններից և խիստ
 քիչ մտահոգվելով ուրիշների քաշած նեղությունների մա-
 սին՝ հետապնդում եին սոսկ իրենց ոգուտը և ծախում
 եին միմիայն անդրոշմ փողեր: Այդտեղից ել հասա Աբրուց-
 ների լերկիրը, վորտեղ տղամարդիկ ու կանայք փայտե
 կոշիկներով են քայլում լեռներում և խոզերին հազցնում
 են իրենց իսկ աղիքները: Դրանից քիչ հեռու, տեսա թե

¹ Այս «կնքված մենաշնորհներ» արտահայտությամբ հե-
 դինակը հավանաբար ակնարկում ե միջին դարերում կաթոլիկ
 յեկեղեցու վաճառած մեղքի թողության թղթերը — ինդուլգեն-
 ցիաները կամ ուրիշ՝ սնտիապաշտությունից ոգտվելու միջոց-
 ները:

² Մեծ կղզի լե Միջերկրականում, Կորսիկայի մոտ:
 Բայց Վենետիկն ու Սարդինիան խիստ հակադիր կետեր են, իսկ
 Չիպոլլան նկատի առնելով ժողովրդի տգիտությունը և ինքն
 ել տգետ լինելով, թվում ե մի շարք աշխարհագրական քիչ թե
 շատ հեռու վայրեր, վորից հետո սկսում ե անհեթեթ բաներ
 ասել, ինչպես յերևում ե հետագա ամբողջ պարբերությունից:

A 21791
 1370



ինչպես մարդիկ հացը տանում էին ձեռնափայտերի վրա, իսկ գինին տոպրակների մեջ: Այս յերկրներից հետո հասա Բաքոսի լեռներին, վորտեղ բոլոր ջրերը ներքև են վազում և շատ չանցած այնքան առաջ գնացի, վոր հասա Պաստինակյան Հնդկաստան, վորտեղ, յերդվում եմ իմ հագած զգեստով¹, տեսա թե ինչպես ոձերը թռչում են — անհավատալի բան բոլոր նրանց համար՝ ովքեր չեն տեսել: Բաց այս բոլորի մասին ինձ սուտ չի հանի Մազիո դել Սաջոն, մի մեծ վաճառակա՛ւ, վորին յես հանդիպեցի այնտեղ և վորն զբաղված եր ընկուլզ ջարդելով և կըճեպները մանրածախ վաճառելով: Բաց չկարողանալով փնտռածս գտնել և նվառի առնելով, վոր դրանից դենը ծովով են գնում², յես ել ստիպված յետ դարձա ու հասա այն սուրբ տեղերը, վորտեղ ամառը թարմ հացը ծախվում է չորս դրանարի, իսկ տաք հացը ձրի յե: Ադ տեղ հանդիպեցի գերապատիվ հար Մի պարսավիր ինձին՝ Յերուսաղեմի արժանա յորագույն պատրիարքին, վորն ի հարգանք իմ հագած սուրբ Անտոնի կարգի զգեստի, ցանկացավ, վոր տեսնե՛ս իր առջև դարսված բոլոր մասունքները: Այնքան շատ էին դրանք վոր յես չեի ցանկանա ձեզ թվել, վորովհետև յի քանի հագար հատ համարելուց հետո ել չեմ վերջացնի: Բաց վորպեսզի ձեզ անօրխիթար չթողնեմ, ապա դրանցից մի քանիսի մասին կըխոսեմ: Նախ և առաջ ցուլց տպեց սուրբ հոգու մի մատը այնքան յրիվ ու առողջ, ինչքան առաջ ել չեո յեղել, ապա սերովբեջի դունչը, վոր յերևաց սուրբ Փրանցիսկոյին,

¹ Չիպոլլան լինելով կրոնավոր, իր հագուստը (սքեմը) համարում եր նվիրական ըստ յեկեղեցական կանոնադրության:

² Չհաշվելով Չիպոլլայի թված չեղյալ յերկրները, ընդունելով նույնիսկ իրական յերկրները՝ մինչև այդ վայրը հասնելը պետք է անցնել բազմաթիվ ծովերից: Մինչդեռ Չիպոլլան մինչև Հնդկաստան հասնելն իրք թե ծովի չի հանդիպել:

քերովբեների¹ չեղունգներից մեկը, կաթուղիկական սուրբ հավատքի հազուստները, մոգերին արևելյան կողմը յերեվ-ցած աստղի մի քանի ճաճանչները, մի սրվակ՝ լի սուրբ Միքայելի քրտինքով՝ չերբ նա կուվում էր սատանայի հետ, սուրբ Ղազարի կզակը և ուրիշ շատ բաներ: Յեվ վորով-հետև լես ել վեհանձնաբար նվիրեցի նրան Մոնտե-Մորելլուի ռամկերենը և Կապրիցիոյից մի քանի գլուխ, վոր նա վաղուց փնտռում էր, նա ինձ բաժին հանեց այդ մասունքներից — սուրբ խաչի ատամներից մեկը, Սո-ղոմոնի տաճարի զանգերի ղողանջներից պարունակող մի սրվակ, Գաբրիել հրեշտակի փետուրը, վորի սասին պատ-մեցի ձեզ, սուրբ Գերարդ դա վիլա Մագնայի մի փայտե կոշիկը վոր վերջերս տվել եմ Ֆլորենցիայի Գերարդ դա Բոնսիեն, վոր սեժ չերկյուղած ություն է տաժում դեպի նա:

Պատրիարքը տվեց նաև այն աժուխից, վորով խո-րովվեց չերանելի նահատակ սուրբ Լավրենտիոսը Այդ բոլոր բաները լես բարեպաշտորեն ինձ հետ եմ բերել: Ճիշտն ասած, թեև իմ մեծավորը վոչ մի ժամանակ թույլ չի տվել, վոր ցույց տամ դրանք, մինչև վոր ինքը չհա-մոզվի, վոր դրանք իսկականներն են, բայց այսոր նրանց կատարած հրաշքները տեսնելով և պատրիարքից նամակ-ներ ստանալով, մեծավորս միամտվել ե և թույլ տվել, վոր ցույց տամ, բայց լես վախենալով ուրիշներին վստա հելուց՝ շարունակ մոտս եմ պահում դրանք: Ճիշտ է նաև, վոր ինձ մոտ մի արկղիկի մեջ պահում եմ Գաբրիել հրեշ-տակի փետուրը, վորպեսզի ամենեին չփչանա, իսկ մի ուրիշ արկղիկի մեջ այն աժուխը, վորի վրա խորովվեց սուրբ Լավրենտիոսը: Բայց այդ չերկու արկղիկներն այն-

¹ Սերովբեներն ու քերովբեները, ըստ քրիստոնեյական հավատի, հրեշտակների հատուկ գնդեր են, այսպես ասած, չերկ-նային իշխանության բանակի հրամանատարական կազմն են:

քան նման են իրար, վոր հաճախ մեկի փոխարեն մյուսն
եմ վերցնում, ինչ վոր հիմա ել ե պատահել, այնպես
վոր, կարծելով թե այստեղ բերածս փետուր պարունակած
արկղիկն ե, բերել եմ այն, վորի մեջ ածուխն ե:

Յես չեմ կարծում, վոր դա մի պարզ սխալմունքի
հետևանք ե, ընդհակառակը, ինձ թվում ե վոր դա աս-
տուծո կամքովն ե արված և նա ինքն ե այս արկղիկը
դրել իմ ձեռքը վորովհետև, հիմա միայն հիշեցի, վոր
չերկու որ հետո սուրբ Հավրենտիոսի տոնն և: Յեվ քանի
վոր աստված ցանկանում ե, վոր նրա մարմինը վառող
ածուխը ձեզ ցույց տալով՝ վառեմ ձեր սքտերում այն
բարեպաշտությունը, վոր դուք պարտավոր եք տածել
նրան, ուստի նա ինձ վերցնել ե տվել վոչ թե փետուրը,
վոր ձեզ ցույց պիտի տալի՝ այլ չերանելի ածուխ-
ները, վորոնք ներծծված են դեռ սուրբ Հավրենտիոսի
սրբազնագուշն մարմնի հոտով: Ուստի, որհնչալ վորդիք,
հանեցեք ձեր գլխարկները և չերկյուղածորեն առաջացեք
տեսնելու դրանք: Բայց նախքան այդ, ասեմ, վոր բոլոր
նրանք, վորոնց վրա այս ածուխով խաչի նշան արվի,
կարող են վողջ տարին ապրել, ապահովված լինելով, վոր
կրակը նրանց կաշեիս անսլայման կչքանա:

Այսպես խոսելուց հետո չեղբայր Չիպոլլան մի որհ-
ներգ չերգեց ի փառաբանություն սուրբ Հավրենտիոսի
ու բանալով արկղիկը ցույց տվեց ածուխը: Յերբ հիմար
ամբոխը չերկյուղած հիացմամբ մի քանի ըսպե դիտեց
դրանք, բոլորն ել մեծ փութկոտությամբ մոտեցան նրան
և սովորականից ավելի մեծ նվեր տալով՝ խնդրեցին, վոր
բարեհաճի խաչի նշանը դժել: Դրա համար ել չեղբայր
Չիպոլլան, վերցնելով ածուխը, սկսեց սպիտակ շապիկ-
ների, հագուստների և կանանց քողերի վրա վորքան կա-
րող եր խոշոր խաչեր դժել, պնդելով թե վորքան ածուխը
գործ ե ածվում խաչ դժելով, այնքան ել ավելանում ե
արկղիկում:

Այսպիսով իր համար մեծագույն ոգուտ ապահովելով
և Չերտալզոյի բոլոր բնակիչներին խաչագծելուց հետո՝
Չիպոլլան իր հնարամտությամբ մի լավ ծիծաղեց նրանք
վրա, ովքեր փետուրը գողանալով կարծել էլին թե ծիծա-
ղում են նրա վրա: Այս վերջինները՝ Ջովաննին ու Բոջոն,
վոր ներկա էլին քարոզին և լսեցին թե ինչպիսի լեղանա-
կով գործից դուրս չեկավ Չիպոլլան, շատ հեռվից սրկ-
սելով և շատ չերկար-բարակ խոսելով, այնքան ծիծա-
ղեցին, վոր շունչները հատավ: Յերբ բազմութունը ցրվեց,
նրանք գնացին Չիպոլլայի մոտ և խիստ շնորհալի ձևով
պատմելով իրենց արածը, վերագարձրին նրա փետուրը,
վոր հաջորդ տարին պակաս ոգուտ չտվեց, ինչքան վոր
սածուխն եր տվել աչդ որը:



Գլխավորի լիազոր՝ Կ—4657. Հրատ. 4242, Գատկեր 1084, Տիրած 4000.
Քուղթ 62×94. Տպագրական 1½ մամ. Մեկ մամուլում 38400 նիշ.
Հեղինակային 1½ մամուլ.

7743

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0005950

Գրքերի Գրադարան

11037

ԳԻՆԸ 60 Կ.

93

ЦЕНА

11
21792

ДЖ. БОККАЧИО
МОЩИ
Гиз Арм. ССР, Ереван 1937 г.